

**Տ. ԱՍՈՂԻԿ ԲԱՆԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԲԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԶԱՏԿԻ ՄԵՌԵԼՈՑԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ**

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 ապրիլի 2004 թ.)

Միրելի քույրեր և եղբայրներ,

Նախքան մեր խորհրդածությունները, որ պիտի ներկայացնենք ձեզ, ցանկանում ենք մեր հոգու և սրտի շնորհակալությունը հայտնել Մայր Տաճարի Լուսարարապետությանը, որ բարեպարեհ առիթ շնորհեց մեզ այսօր՝ երկար փարիների մեր երազանքը իրականացած փեսերելու՝ Սուրբ ու Աննահ Պարարագ մարուցելով Ամենայն Հայոց Մայր Տաճարում:

*«Ակնկալության քրիստոնեից՝
յարության մեռելոց»:
(Տերպուղիանոս)*

«Յանուն Նոր և Որդու և Հոգույն Սրբոյ. ամեն»:

Ահա այսպիսի վկայություն է փալիս երանելի Տերպուղիանոսն իր գրվածքներից մեկում, և սա իբրև հիմք ունի աստվածաշնչական հեթանոսական ճշմարտությունը, որ է՝ առանց հարության հավարքի ընդունայն է քրիստոնեական վարդապետությունը և ընդունայն է քրիստոնեությունն ընդհանրապես (Ա Կորնթ. ԺԵ 14-17), որովհետև եթե քրիստոնեության Հիմնադիրը՝ մեր Տերը գերեզմանված մնար և հարություն չառներ, ապա քրիստոնեությունը չէր լինի կենդանի ու կենդանարար հավարք, այլ սոսկ կսահմանափակվեր իբրև բարոյական մի ուղղություն, բարոյական պարզամտների մի ամբողջություն, բայց երբեք մարդու առջև չէր բացի հանդերձյալի դռները, անկյալ մարդուն չէր վերանորոգի և չէր վերադարձնի կորսված անմահության շնորհը, որն աստվածաստեղծ աղամորդու բնութենական անկապրելի հարկանիշն էր:

Սակայն բանասարկու թշնամու պարտանքով մարդը ոչ միայն խաբվում է, այլև աստվածային շար ու շար պարզների հետ կորցնում նաև իր այդ հավակությունը: Եվ երկինքն ու երկիրն իր անբարբառ լեզվով, որպես վկան փիեզերական այդ ողբերգության, հիրավի, այսպես արձանագրեց մարդկային պարմագրքի առաջին էջում. «Ո՛ր մարդ արարած, դու, որ քո Արարչի պարկերն ու նմանությունն ունեիր և թագն ու պսակն էիր արարչագործության, այժմ արդեն հակապարկերն ես քո Արարչի, քանզի երբ դրախտում սայթաքեցիր և գեղնին բախվեցիր՝ կորցրեցիր քո ակնեղենը և գրկվեցիր անմահության գոհարից»:

Սակայն Արարիչը թույլ չտվեց, որ Իր սրեղծագործության թագն ու պսակն ակնազուրկ մնար, ուստիև աշխարհ առաքեց Իր Միածին Որդուն, և Բանն Աստված մարդեղացավ և Իր մարդեղության փնտրիչություններով՝ քար առ քար վերադարձրեց արարչագործության

թագ ու պսակի կորսված գոհարեղենը և նրան վերակերպեց մի այնպիսի շքեղությամբ, որն անպարմելի է ու անճառելի:

Միրելիներ, չեմ ցանկանում խոսքս երկարել, քանի որ արդեն երկու օր է, ինչ բացաբըրվում ու քարոզվում է հրաշափառ հարության խորհուրդը, բայց կցանկայի անդրադառնալ մի կարևոր հանգամանքի, որ եթև քրիստոնյաներիս ակնկալությունը մեռելների հարությունն է, ուրեմն մեռյալները, որ, ավելի ճիշտ, ննջեցյալներ են, անգո չեն, և կամ անգոս վիճակում չեն և ոչ էլ անհաղորդ են մեզ: Նրանք կենդանի են և իբրև հաղթական Եկեղեցու անդամներ մեզ՝ զինվորյալ Եկեղեցու մարտիկներիս են միացած և մեզ հետ հոգևոր հաղորդակցության մեջ են: Եվ նույնիսկ նրանցից շատերը Տիրոջից իրենց տրված բարեխոսության շնորհ ունեն և հանապազ բարեխոս են մեզ համար, որպեսզի այս կյանքում երբեք ու երբեք չնահանջենք մեր հավաքքից՝ բազմաթիվ փորձությունների պարճառով, այլ, ինչպես իրենք, քաջարի պատերազմ մղենք, մեր հավաքքը պահենք և մեր աչքերն ի Տեր փակենք հարության հավաքքով, հույսով և ակնկալությամբ:

Միրելի բույրեր և եղբայրներ, այս կյանքում գրեթե ոչ ոք իր պարտքը լիովին չի կարողանում հատուցել, հեղևաբար մեծավ մասամբ տրտմության հովտից դուրս ենք ելնում որպես պարտապաններ: Ահա և մեր ննջեցյալներից շատերը, վստահաբար, մեզանից բաժանվեցին անպարտասպ՝ իրենց պարտքերը չտվեցին և այս աշխարհից որպես պարտառուներ հեռացան: Եվ բնական է ու արդար, որ նրանց պարտքերի վճարման պարտակալությունը փոխանցվեց մեզ՝ ողջերիս: Ուստի մեր Առաքելական և Սուրբ Եկեղեցին իբրև հավաքքի վարդապետության ճշմարտություն համարում, ընդունում և դավանում է վասն ննջեցյալների կարարվող աղոթքը: Եվ այս անհիմն ճշմարտությունն չէ. սրա հիմքն Աստվածաշունչ մարտնում է, որտեղ բազմաթիվ վկայություններ կան, որ արդարների աղոթքը խիստ օգտակար է ոչ միայն ողջերի համար, այլև ննջեցյալների:

Այս պահիս ցանկանում ենք հիշատակել այդ վկայություններից սուս մեկը՝ արճանագրված Մակաբայեցիների երկրորդ գրքի մեջ: Այնտեղ ասվում է, որ Նուդա Մակաբայեցին «...չորս սատեր արճաթ հավաքեց և տվեց, որ տանեն, Երուսաղեմում գոհեր մատուցեն կատարված մեղքերի համար: Դա խիստ իմաստուն քայլ էր, որովհետև ինչ որ անում էր, մեռելների հարության մասին մրահոգվելով էր անում: Եթե պատերազմում ընկածների հարության ակնկալություն չունենար, գուր կլիներ մեռելների համար աղոթք մատուցելը» (Բ Մակար. ԺԲ 43-44):

Ներևապես, սիրելի հավաքացյալներ, մենք, որ հավատում ենք մեր Տիրոջ՝ Նիսուս-Քրիստոսի հրաշափառ հարությանը և նաև քրիստոսականների՝ մեզանից յուրաքանչյուրի հարությանը, չպիտի դաղարենք ոչ միայն մեզ համար աղոթելուց, ոչ միայն մեր անճերի համար ողորմության գործեր անելուց, այլև նույնը պիտի կատարենք հանուն մեր ննջեցյալ հարազատների, որովհետև նրանք իրենց ժամանակավոր կայաններում, բաժանված իրենց մամիններից, հոգվով սպասում են, թե իրենց կենսունակ հարազատները, ողջ արյունակիցներն ու մարտիմներն ի՞նչ բարիք պիտի գործեն իրենց համար:

Աստի եղեք, սիրելիներ, որ մեր կատարած յուրաքանչյուր աղոթք, յուրաքանչյուր բարի գործ աննպատակ ու անպարասխսն չի մնալու: Այո, ճշմարիտ է, որ մենք չգիտենք, մեր ննջեցյալները մեր աղոթքներով Արքայությունը կժառանգեն, թե՛ ոչ, քանզի դրա իմա-

ցումը մեզ փրված չէ: Բայց մենք փոշյակ ենք Ասրվածաշունչ մարյանից և գիտենք մեր Ամենասեր Ասրծո վերաբերմունքի մասին, որ Տերն արտահայտեց Իր սիրելի ծառա Արրահամին՝ ասելով, որ մեղսալից քաղաքները չի կործանի, եթե այնպեղ լոկ փասը արդարներ գրկվեն (հմմտ. Ծննդ. ԺԸ 32): Անավասիկ սուրբգրային այս վկայությունը մեզ համար սբանչելի երաշխիք է՝ հավարթով աղոթք խնկարկելու և բարեգործելու վասն մեր նեցեցելոց, որոնք, անշուշտ, կունենան արդարության գեթ փասը գործ, որի համար Անաչառ Դսփավորի ողորմությանն ու բարեգթությանը կարժանանան:

Արդ, այս համոզմունքով և այս հավարթով՝ եկեք մեկ սիրտ, մեկ հոգի և մեկ շունչ դարձած աղոթենք մեր երկևավոր Նորը, որ ընդունելի անի մեր հանապազօրյա պարարազները և քաղցր հայացքով կայի մեր նեցեցյալների հոգիներին, այցելի նրանց ու Երկնի անանց արթայությանն արժանացնի:

Իսկ մեզ, որ փակավին պարերազմի մեջ ենք, թող Տերը խաղաղություն շնորհի, իմաստություն պարզնի, որպեսզի ճանաչելով ճշմարտությունը՝ հեղամուր լինենք դրան, և մենք էլ մեր հերթին արժանի լինենք Տիրոջ Արթայությանը:

«Շնորհք, սեր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մերոյ եղիցին ընդ մեզ ամենևսևսևս. ամէն»: